

Ծ Ո Վ Ը

Իրիկուան ժամուն, օրն երբ մերձ ի մահ,
Կը շիջի երկնի խորքին մէջ սատաի,
Կ'արթննայ յանկարծ ծովն հազարամեայ,
Շարժելով ի լիւղ մարմինն ափէ ափ:

Փրփուրը բերնին կը վազէ խնդրունդ,
Խառնիխուն հողմով, խեռ եւ ապստամբ,
Սի'րտ ամբարհաւած, անդունդէ անդունդ
Սընած եւ մեծցած դառն առանձնութեամբ:

Շառաչն ու իր կոծ կը շրջին ճոխճեմ
Ըստուերով պատած ժայռերուն խորքին,
Որոնց մենութեան եւ մութին ընդդէմ
Կ'եղերերդէ ճայն ու կ'ողբայ քամին:

Մերթ, խմբած ի մի կոհակներն իր բիւր,
Կը խուժէ քարափ բացերէն իր լայն,
Ու արշաւանքն իր նրման է տըխուր
Մահուան դէմ ելլող վաշտերուն շարժման:

Իր յորձանքներուն մակերեսն ի վեր
Չեն սահիր թեւերն առազաստին պերճ,
Հոն ամպն ու մըշուշ իրար են գրկեր,
Բուքն հոն կը յուզէ փողերն իր անվերջ:

Ու իրարանցման ծոցին հողմէ հողմ,
Միշտ ինքն է ներկայ մականն ափին բիրտ,
Միշտ իր կամքն է որ կ'իջիս ամէն կողմ,
Ինքն հըզօր արքայ եւ տէր բարկասիրտ:

Երբ շանթերն հոյլ հոյլ, յեցած կողք կողքի,
Կը հասնին ըշտապ լեռներէն հըրոյ՝
Ան կը ժողվէ իր կոհակներն ի մի
Փշրելով անոնց զայրոյթն ու դըրոհ:

Ու մահուան վերեւ շանթերուն մոլիւն,
Ու խարակներուն, ամպին թըխադոյն,
Ան բարձր կը շաչէ յաղթերդն ու քրքիջ
Իր ծանրաթաւալ ճորտ ալիքներուն:

Քարաժայռերուն ծովն է ան անծայր,
Խորտակուած կեանքի թառաչ եւ յուզում,
Իր սրտին վըրայ դարերէ ի դար
Ցաւն ան կ'օրօրէ մարդկութեան տրտում:

Ու երբ փաթթուած լուսնի շողերով,
Կը նիւհէ ընդմէջ խուժերուն անանց,
Դէմքն է ան լուսեղ երազին գինով,
Եւ համապարփակ մեծ խաղաղութեանց:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ԽԱՆՕԹ.

Այս քերթուածը մաս կը կազմէ « ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՆՆԵՐ » տիտղոսեալ հատորիմ, որ թղթորդիմ պատրաստ է հրատարակութեամբ:

ԱՌԱՋԻՆ ՇՈՂԸ

Արշալոյսէն շողիկ մ'իջաւ մեղմաբար.
Իրիկնային շողն էր այս,
Որ արտասուեց ամբողջ գիշերն ինձ համար,
Եւ խորհեցաւ իմ վըրաս:

Բայց նա հիմա գիրդ թեւերով տըղու պէս
Կուրծքիս փարած կը հանդէի,
Արեւներէն նա բաժնըւած է կարծես,
Սիրելու գիս աւելի:

Ո՛հ, կեանքիս մէջ այսքան անոյշ կարօտանք
Եւ չունեցայ աշխարհէն,
Երազ մը չէ՛, ոչ թափանցիկ սուտ պատրանք՝
Ինչպէս մարդիկ կը խաբեն:

Եւ երբ շողիկն ես սիրավառ գրկեցի,
Իմ սիրտս ըսաւ՝ Գարուն է.
Ինչպէս մեղուն երբ վարդին ծոց կը հանդէի,
Արփին կ'ըսէ. Քերթուած մ'է: